ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՀՀՔԿԴ-ՊԸԾՁԲ-16/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով պարզեցված ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ուսուցողական ֆիլմերի և տեսաֆիլմերի արտադրության ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.05.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյանը, Լ. Աթանյանը, Ե.Հովհաննիսյանը, Վ.Մկրտչյանը և քարտուղար Հ.Խաչատրյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ՊԸԾՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ (Ք. Երևան, Բաբաջանյան 31շ., 45 բն.)

Բ) հայտ չեն ներկայացրել հրավեր ստացած մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Առարկայի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
		«ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
1	*Ուսուցողական ֆիլմերի և տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ*	9652000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել

   «ԱՄԱՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ,

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Լ. Աթանյան

_____ Ե.Հովհաննիսյան

_____ Վ.Մկրտչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հ.Խաչատրյան